ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 1-ին, երկուշաբթի.- ԺԵ օր Մեծի Պահոց:

Այսօր Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի կարգադրությամբ կատարվեցին նոր նշանակումներ. Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը նշանակվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ, իսկ Տ. Արշակ աբեղա Խաչատրյանը՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրի պաշտոնակատար:

«Էջմիածին» ամսագրի խմբագրակազմը շնորհավորում և նորանոր հաջողություններ է մաղթում Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանին և Տ. Արշակ աբեղա Խաչատրյանին՝ իրենց հետագա գործունեության մեջ:

Այսօր, երեկոյան, Հոգևոր ճեմարանի նախկին շենքում բացվեց միաբանական հանգստյան սենյակ՝ հավաքատեղի: Այս առիթով իր օրհնության խոսքն ասաց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Կատարվեց Տնօրինեքի կարգ՝ նախագահությամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի:

Մարտի 2-ին, երեքշաբթի.- ԺԶ օր Մեծի Պահոց:

Այսօր, առավոտյան, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը Վեհարանում ընդունեց «Էջմիածին» ամսագրի խմբագրակազմին: Սրբազան Հայրը պաշտոնապես հայտնեց Տ. Արշակ աբեղա Խաչատրյանին՝ խմբագրի պաշտոնակատար նշանակելու որոշման մասին, և միաժամանակ իր գնահատանքը հայտնեց խմբագրի նախկին պաշտոնակատար Մարիամ Վարդանյանին՝ ամիսներ շարունակ այդ պաշտոնը հաջողությամբ վարելու համար:

«Էջմիածին» ամսագրի խմբագրակազմը նույնպես իր գնահատանքն է հայտնում Մարիամ Վարդանյանին՝ կատարած ջանադիր աշխատանքի համար:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ եպիսկոպոսական հավաք:

Մարտի 3-ին, չորեքշաբթի.- ԺԷ օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Մայր Աթոռի ողջ միաբանության մասնակցությամբ կատարվեց հանդիսավոր «Խաղաղական» ժամերգություն: Այնուհետև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում քննարկվեցին Արմավիրի թեմում տարվող քարոզչական աշխատանքների հետ առնչվող հարցեր:

Մարտի 5-ին, ուրբաթ.- ԺԹ օր Մեծի Պահոց:

Այսօր Կալկաթա (Հնդկաստան) մեկնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

Մարտի 7-ին, կիրակի.- Դ կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսի):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Ներսեհ աբեղա Խալաթյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը՝ «...որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց» (Ղուկաս ԺԶ 8) բնաբանով:

Մարտի 10-ին, չորեքշաբթի.- ԻԴ օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով:

Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի խնդրանքով, Միաբանական ժողովին իր մասնակցությունը բերեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Արբազան Հայրը ներկայացրեց «Տնտեսի» առակի վերաբերյալ իր խորհրդածությունները, որի շուրջ հոգևոր մթնոլորտում քննարկումներ ծավալվեցին: Ապա Շահե Արբազանը պատասխանեց միաբանների հարցերին:

Մարտի 14-ին, կիրակի.- Ե կիրակի Քառասնորդական Պահոց (Դատաւորի):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր ավագ քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Տ. Մոմիկ վրդ. Սարգիսյանը:

Մարտի 16-ին, երեքշաբթի.- Լ օր Մեծի Պահոց:

Այսօր Կալկաթայից Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը:

Մարտի 17-ին, չորեքշաբթի.- ԼԱ օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ Միաբանական ժողով, որի ընթացքում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը միաբան եղբայրների հետ կիսեց նախորդ կիրակի Արմավիրի թեմ կատարած իր շրջայցի տպավորությունները:

Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը համառոտ կերպով ներկայացրեց Կալկաթա կատարած իր այցելության ընթացքում թե՛ տեղի Մարդասիրական ճեմարանի առաքելությունը շարունակելու և թե՛ հայ համայնքի կյանքի աշխուժացման հետ կապված որոշ խնդիրներ:

Մարտի 21-ին, կիրակի.- Զ կիրակի Քառասնորդական Պահոց (Գալստեան):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գալըճյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը՝ «Սիաւասիկ Տէր իբրև զհուր եկեսցէ, և կառք նորա՝ իբրև զմրրիկ» (Եսայի ԿԶ 15) բնաբանով (Տե՛ս էջ 32):

Մարտի 23-ին, երեքշաբթի.- Լէ օր Մեծի Պահոց:

Այսօր, երեկոյան, Վեհարանում տեղի ունեցավ եպիսկոպոսական հավաք:

Մարտի 24-ին, չորեքշաբթի.- ԼԸ օր Մեծի Պահոց:

Այսօր Վեհափառ Հայրապետը Միացյալ Նահանգներից մեկնեց Հռոմ՝ մասնակցելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությամբ և անմիջական մասնակցությամբ Վատիկանի Թանգարանի Սիքստինյան սրահում բացվելիք Հայոց մկրտության 1700-ամյակին նվիրված «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսին: Այս կապակցությամբ, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի գլխավորությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Հռոմ մեկնեցին նաև Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տիար Ռաֆայել Պապայանը:

Մարտի 26-ին, ուրբաթ. - Խ օր Մեծի Պահոց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ երկու օր առաջ Հռոմ մեկնած Մայր Աթոռի պատվիրակությունը:

Մարտի 27-ին, շաբաթ. - Ա օր Մեծի Պահոց: Յիշատակ Յարութեան Դաղարու:

Այսօր, առավոտյան, Վեհարանում տեղի ունեցավ միաբանական ժողով, որի ընթացքում Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը միաբաններին ներկայացրեց Վատիկանի Թանգարանի Սիքստինյան սրահում բացված Հայոց մկրտության 1700-ամյակին նվիրված «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսի ընթացքը:

Մարտի 28-ին, կիրակի.- Ծաղկազարդ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ա. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց պատարագիչ Սրբազան Հայրը՝ «Օրհնեալ որ գաստ յանուն Տեառն» (Հովհ. ԺԲ 13) բնաբանով (Տե՛ս էջ 36):

Մարտի 29-ին, Ավագ Երկուշաբթի.- Պահք:

Այսօր, երեկոյան, առողջական պատճառով վեցամսյա բացակայությունից հետո, Լոնդոն-Երևան հատուկ չվերթի օդանավով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը (Տե՛ս էջ 9):

Մարտի 31-ին, Ավագ Երեքշաբթի.- Պահք:

Այսօր Վեհարանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի և Հայաստանի թեմական առաջնորդների համատեղ նիստ:

Տերունական աղոթքից հետո, Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, ողջունեց Վեհափառ Հայրապետի վերադարձը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությանը մաղթելով քաջառողջություն և երկար տարիների կյանք:

Ժողովի ընթացքում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները Նորին Սրբությանը ներկայացրին Վեհափառ Հայրապետի բացակայության ընթացքում կատարված աշխատանքները:

Վեհափառ Հայրապետը ժողովականներին տեղեկացրեց իր առողջական վիճակի մասին, գնահատեց իր բացակայության ընթացքում կատարված գործերը:

Ապա Նորին Սրբությունը հայտնեց իր և Հայաստանի Հանրապետության նախագահի հրավերով Հռոմեա-Կաթոլիկ եկեղեցու պետի՝ Հովհաննես-Պողոս Բ Պապի, որպես Մայր Աթոռի հյուր, Հայաստան կատարելիք առաջիկա այցելության մասին, որը, ըստ նախնական պայմանավորվածության, նախատեսված է այս տարվա հուլիս ամսվա սկզբին:

Վերջում Վեհափառ Հայրապետը որոշ թելադրանքներ կատարեց ու բաշխեց իր օրհնությունները: